

*ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻՑ*

## **ՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵ- ՂԵՑՈՒ ՍՐԱՀՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՆԻՆ**

Երիտասարդների համար արդեն նվիրական օր է դարձել Ս. Սարգիս գորավարի տոնը, որը նշանավորվում է որպես երիտասարդների օրհնության օր, իսկ Ս. Սարգիսը՝ որպես հովանավոր սուրբ և բարեխոս առ Աստված:

Փետրվարի 3-ին Գուգարաց թեմի Ս. Սարգսի անունը կրող բոլոր եկեղեցիներում մատուցվեց Ս. Պատարագ, որի ավարտին կատարվեց երիտասարդների օրհնություն:

Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցում երիտասարդներն ստացան թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհի եպս. Չուլջյանի օրհնությանը: Սրբազան Հայրը, շնորհավորելով բոլոր երիտասարդներին այս գեղեցիկ տոնի առթիվ, հորդորեց հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և հայրենի ավանդույթներին, տուրք չտալ օտարամուտ վարք ու բարքին: Երիտասարդները, Սրբազան Հորից ստանալով օրհնություն և համբուրելով Խաչը, Ս. Սարգիս եկեղեցուց ճանապարհվեցին դեպի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի: Եկեղեցու ներքնահարկ սրահում թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը երիտասարդության օրվա առթիվ կազմակերպել էր տոնական հանդիսություն, որին աջակցել էին ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքը, Նկարիչների միությունը, ՎՊՄԻ-ի Արվեստի ամբիոնը, Գեղագիտական կենտրոնը, Գեղարվեստի դպրոցը: Հանդիսության սրահը զարդարված էր Գեղագիտական կենտրոնի երիտասարդ աշխատակիցների, Գեղարվեստի դպրոցի և ՎՊՄԻ-ի երիտասարդ նկարիչների աշխատանքներով:

Իր ողջույնի և օրհնության խոսքով բացելով հանդիսությունը՝ ՔԴԿ տնօրեն Տ. Վահան քահանա Ազարյանը շնորհակալություն հայտնեց հանդիսությանն աջակցած միությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, մտավորականներին ու արվեստագետներին: Գիտակցությունը, որ եկեղեցական ու արդեն ժողովրդական դարձած, երիտասարդների հովանավոր ու պաշտպան Ս. Սարգիս գորավարի տոնը միավորել է բոլորին՝ դասախոսներին, ուսանողներին, աշակերտներին, երիտասարդ արվեստագետներին ու մտավորականներին, ուրախալի է և հուսադրող: Հուսադրող, որ այլևս մեր կյանքում տեղ չեն գտնի օտարամուտ տոներն ու սովորությունները:

*ԱՍՏՂԻԿ ԱՍՐՅԱՆ*